



Կապիտալ
ասեթ
մենեջմենթ

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ»
փակ բաժնետիրական ընկերության**

**ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(նոր խմբագրությամբ)**

Հաստատված է «Կապիտալ Ասեթ
Մենեջմենթ» ՓԲԸ տնօրենների խորհրդի
2022 թվականի հուլիսի 25-ի
թիվ 2022.25.07-10 որոշմամբ

Խորհրդի նախագահ՝
Տ. Կարապետյան

Երևան-2022



ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոն 1-1. Կանոնակարգը: Անվանումը

- (ա) Սույն Կանոնակարգը կարգավորում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի ստեղծմանն առնչվող հարաբերությունները:
- (բ) Սույն Կանոնակարգի անվանումն է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Կանոնակարգ»:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կողիֆիկացիան և հղումները

- (ա) Սույն Կանոնակարգը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Գլուխ 1. «Ընդհանուր դրույթներ», Գլուխ 2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը», Գլուխ 3. «Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը», Գլուխ 4. «Ներքին դիտարկումների ստորաբաժանումը», Գլուխ 5. «Ներքին աուդիտը», Գլուխ 6. «Աշխատակիցների ուսուցումը»:
- (բ) Գլուխները համարակալվում են արաբական թվերով:
- (գ) Վերնագրերը միավորում են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով Վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է նրանում միավորված Կանոնների առարկան:
- (դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2-1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):
- (ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝
 - 1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն),
 - 2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ 2)), կամ, եթե շարադրանքն առանձին տողերով չէ՝ հռոմեական թվերով (օրինակ՝ (ii)), և
 - 3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)), կամ, եթե շարադրանքն առանձին տողերով չէ՝ հռոմեական թվերով (օրինակ՝ (ii)):
- (զ) Սույն Կանոնակարգում Հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝
 - 1) Վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները,
 - 2) Այլ Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝«1-3(բ)(5)(Ա) Կանոնի համաձայն», հղումը նշանակում է «1-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն»,
 - 3) Եթե հղում է կատարվում նույն Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին, կամ նույն Ենթականոնի Կետին կամ Ենթակետին, կամ նույն Կետի Ենթակետին, ապա հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝«(բ)(5)(Ա) Ենթականոնի համաձայն», հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն»,
 - 4) Սույն Կանոնակարգի որևէ Վերնագրին (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «սույն Կանոնակարգի» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին,
 - 5) Որևէ ձևին կամ աղյուսակին հղում ենթադրում է Կանոնակարգի Հավելվածում ներառված տվյալ ձևը կամ աղյուսակը:

Կանոն 1-3. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

- (ա) Սույն Կանոնակարգը, դրա փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դրանց հրապարակմանը հաջորդող օրը: Հրապարակումը պետք է հաջորդի «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից Կանոնակարգը հաստատելուն:
- (բ) Սույն Կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից:
- (գ) Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում Ընկերության՝ 30.08.2021թ. տնօրենների խորհրդի կողմից հաստատված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կանոնակարգը:

Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

- (ա) Սույն Կանոնակարգի Կանոնները ներքին իրավական ակտ են և ընդունվում են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության՝ 2008 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-80-Ն օրենքի 23-րդ հոդվածի, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի համաձայն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
- (բ) Սույն Կանոնակարգի Կանոնները մեկնաբանվում են՝ ելնելով ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի, արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

Կանոն 1-5. Հասկացություններ

- (ա) Սույն Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
 - 1) «**Ավագ Ղեկավարություն**»՝ Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն և սույն Կանոնակարգով նախատեսված այլ անձինք.
 - 2) «**Բարձր Ռիսկի չափանիշ**»՝ Օրենքով, Լիազոր մարմնի իրավական ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված չափանիշ, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին.
 - 3) «**Գործարար հարաբերություն**»՝ Ընկերության կողմից Հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի Միանգամյա գործարքներով.
 - 4) «**Գործարք**»՝ Ընկերության և Հաճախորդի կամ Լիազորված անձի միջև, ինչպես նաև Հաճախորդի կամ Լիազորված անձի և այլ անձի միջև Գործարք, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է Ընկերության ուսումնասիրության (դիտարկման) առարկա.
 - 5) «**Գործարքի մյուս կողմ**»՝ Հաճախորդի կողմից իրականացվող Գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է Գործարքից բխող գույքը.
 - 6) «**Դադարեցում**»՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատում.
 - 7) «**Ընկերություն**»՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն.
 - 8) «**Ընկերության աշխատակից**»՝ Ընկերության կամ Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերի կազմում կամ անունից գործառույթներ իրականացնող աշխատակից.
 - 9) «**Իրական շահառու**»՝ ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնետնասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

- 10) «**Լիազոր մարմին**»՝ ՀՀ կենտրոնական բանկ.
- 11) «**Լիազորված անձ**»՝ Հաճախորդի հանձնարարությամբ և Հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով Հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ.
- 12) «**Կասեցում**»՝ կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք.
- 13) «**Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն**»՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է, կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է, կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.
- 14) «**Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ**»՝ սույն Կանոնակարգով և Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակ կամ ազդակ.
- 15) «**Կենսաթոշակային հովանավոր**»՝ կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին ի օգուտ աշխատողների մասնակցող գործատու կամ այլ անձ, որն աշխատողների անունից և (կամ) օգտին կատարում է կամավոր կուտակային վճարումներ.
- 16) «**Կենսական շահերի կենտրոն**»՝ վայր, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը/բնակարանը, որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը, և որտեղ գտնվում է նրա անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական գործունեության իրականացման վայրը.
- 17) «**Հաճախորդ**»՝ Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև անձ, որն Ընկերությանն առաջարկում է կատարել կամ կատարում է Միանգամյա Գործարք.
- 18) «**Հաճախորդի գործարար բնութագիր**»՝ Հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և Միանգամյա Գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, Լիազորված անձանց և Իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև Հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ Ընկերության տեղեկությունների (պատկերացումների) ամբողջություն.
- 19) «**Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն**»՝ Ընկերության կողմից Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում, որը, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, ներառում է

նաև Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված գործողությունների իրականացումը.

- 20) «**Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն**»՝ Ընկերության կողմից Հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց, որը ներառում է Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված գործողությունների իրականացումը.
- 21) «**Հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն**»՝ Ընկերության կողմից Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառում, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են Օրենքով, Լիազոր մարմնի ընդունված նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված տեղեկությունները.
- 22) «**Միանգամյա գործարք**»՝ Գործարք, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և(կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում.
- 23) «**Մերժում**» գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացնելը.
- 24) «**Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակից**»՝ Ընկերության՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող աշխատակից.
- 25) «**Պատժամիջոցների ցանկեր**»՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԱՄՆ արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակի (OFAC), ԵՄ պատժամիջոցների (<https://www.sanctionsmap.eu/>) ցանկեր: Գործընկերների հետ գործարար պայմանավորվածությունների շրջանակում Ընկերության խորհրդի որոշմամբ Պատժամիջոցների ցանկը կարող է ընդլայնվել՝ ներառելով համապատասխան երկրների և միջազգային մարմինների ցանկեր.
- 26) «**Ռիսկ**»՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, Գործարքների կամ Գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ Լիազոր մարմնի կողմից սահմանված այլ չափանիշների.
- 27) «**Ստեղծում**»՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքը, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև որևէ Գործարար հարաբերության կամ Միանգամյա Գործարքների հաստատման կամ իրականացման արգելք.
- 28) «**Ցածր ռիսկի չափանիշ**»՝ Օրենքով կամ Լիազոր մարմնի իրավական ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված չափանիշ, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին.
- 29) «**Քաղաքական ազդեցություն ունեցող անձ**»՝ պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձ (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝
 - ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
 - բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.

30) «**Օրենք**»՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության՝ 2008 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-80-Ն օրենք:

բ) Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, ապա դրանում օգտագործվող հասկացություններն ունեն Օրենքով նախատեսված նշանակությունը:

Կանոն 1-6. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը

(ա) Ընկերությունը պարբերաբար բացահայտում և գնահատում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը ու ապահովում բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման քաղաքականությունը, վերահսկման մեխանիզմները և ընթացակարգերը սույն Կանոնակարգին համապատասխան:

(բ) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերը գնահատելիս, մինչև ռիսկի ընդհանուր մակարդակը բնորոշելը և ռիսկերի զսպման համապատասխան մակարդակ սահմանելը, Ընկերությունը հաշվի է առնում ռիսկի բոլոր գործոնները և իրականացնում տարբերակված միջոցառումներ՝ ռիսկի տեսակին և մակարդակին համապատասխան:

(գ) Ընկերությունը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ վերանայում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը, ինչպես նաև բացահայտում և գնահատում ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Ընդ որում՝ ռիսկերի բացահայտումը և գնահատումն իրականացվում է մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր/զարգացող տեխնոլոգիաների կիրառումը, որոնք ներառվում են Ընկերության տվյալ ծառայությունների տեսակների մատուցման ներքին իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Կանոն 2-1. Տեղեկացման ենթակա գործարքներ կամ գործարար հարաբերություններ

(ա) Ընկերությունը Լիազոր մարմինն է ներկայացնում հետևյալ գործարքների վերաբերյալ հաշվետվություններ.

1) անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը.

2) կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը.

- 3) Կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ, անկախ (1)-ին և (2)-րդ ենթակետերով նախատեսված գործարքի գումարի չափից:
- (բ) Արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում Լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այդ տեղեկատվության տրամադրման կամ չտրամադրման, այդ թվում՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն հանձնարարականների ստացման կամ չստացման փաստի մասին:
- (գ) 2-1(ա) Ենթականոնով նախատեսված հաշվետվությունների կազմման և Լիազոր մարմնին տրամադրման կարգը սահմանվում է Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, Կանոնակարգով և դրա հիման վրա ընդունված այլ ներքին իրավական ակտերով:
- (դ) 2-1(ա) Ենթականոնով նախատեսված հաշվետվությունների կազմումն ապահովելու համար Ընկերության աշխատակիցները Գործարքը կատարելու կամ Կասկածելի Գործարքի հիմքը (Գործարար հարաբերությունը) հայտնաբերելու օրը Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին են տրամադրում հաշվետվությունը կազմելու և Լիազոր մարմնին ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

Կանոն 2-2. Կասկածելի գործարքները կամ գործարար հարաբերությունները, գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը, դադարեցումը և մերժումը

- (ա) Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ներքին կամ արտաքին ազդակների ստացման դեպքում, ինչպես նաև Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի նախաձեռնությամբ:
- (բ) Ընկերության աշխատակիցը Կասկածելի Գործարքներից մեկը կամ մի քանիսը հայտնաբերելու կամ դրա մասին կասկած ունենալու դեպքում, Ընկերության Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին էլեկտրոնային կամ թղթային եղանակով ներկայացնում է տեղեկացում (Ձև 2-2(գ)), որտեղ նշվում է Գործարքը (Գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու հիմքը, ինչպես նաև կցվում են բոլոր այն փաստաթղթերը, որոնք աշխատակցի կարծիքով անհրաժեշտ կլինեն համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու համար:
- (գ) Սույն Կանոնակարգի իմաստով գործարքը կամ գործարար հարաբերությունը համարվում է կասկածելի, եթե՝
- 1) գործարքի (գործարար հարաբերության) պայմանները չեն համապատասխանում Հաճախորդի գործարար բնութագրին, ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների (գործարար հարաբերությունների) պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին,
 - 2) Ընկերության համար պարզ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքը (գործարար հարաբերությունը) ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում,
 - 3) կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով,
 - 4) Ընկերության համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքների արժեքը չի գերազանցում սույն Կանոնակարգով նախատեսված հաշվետվության տրամադրման և Հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ սահմանաչափը միայն այն պատճառով, որ Հաճախորդը ցանկանում է խուսափել Ընկերության կողմից այդ գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրումից կամ նույնականացումից,
 - 5) Ֆիզիկական անձը, ով փոխկապակցված է որևէ իրավաբանական անձի հետ, իր անունից այլ իրավաբանական անձի փոխանցում (տրամադրում) է գումարներ (արժեթղթեր), որն ակնհայտորեն իրականացվում է այդ իրավաբանական անձանց միջև պայմանագրային

պարտավորությունների կատարման նպատակով կամ այդ իրավաբանական անձանց միջև այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար,

6) առկա է հնարավոր համընկնում Հաճախորդի կամ Գործարքի մյուս կողմի տվյալների և Պատժամիջոցների ցանկերի կամ Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև,

7) դիտարկվող իրավիճակն ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին,

8) գործարքը կամ գործարար հարաբերությունը, ինչպես նաև գործարքի կամ գործարար հարաբերության հաստատման փորձը դիտվում է կասկածելի Օրենքով, Լիազոր մարմնի իրավական ակտերով, կասկածելիության չափանիշներով և տիպաբանություններով սահմանված դեպքերում:

(դ) Ընկերությունը դիտարկում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հարցն այն դեպքում, երբ Ընկերության համար ակնհայտ է դառնում, որ թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության՝ Օրենքով, սույն Կանոնակարգով կամ Լիազոր մարմնի սահմանած չափանիշներից կամ տիպաբանություններից, դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

(ե) 2-2(գ)(6) կետով սահմանված դեպքում, երբ առկա է հնարավոր համընկնում ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, Լիազոր մարմնին ներկայացնում է Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն և կայացնում Հաճախորդի միջոցների Սառեցման վերաբերյալ որոշում:

(զ) 2-2(գ)(6) կետով սահմանված դեպքում, երբ առկա է հնարավոր համընկնում Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը հանձնարարականում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականով սահմանված գործողությունները:

(է) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն Ընկերության աշխատակցից տեղեկացումը ստանալու նույն օրը իրականացնում է ներկայացված տեղեկատվության վերլուծություն և պատրաստում է եզրակացություն: Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը վերլուծություններ կատարելիս օգտվում է Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում Լիազոր մարմնի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ: Այն դեպքում, երբ կատարված վերլուծության արդյունքում Ներքին դիտարկումների աշխատակիցը պարզում է, որ առկա չեն սույն Կանոնակարգով և Օրենքով նախատեսված Կասկածելի Գործարքի (Գործարար հարաբերության) բոլոր չափանիշները, կամ գործարքը (գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու հիմքերը անբավարար են, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն Ընկերության աշխատակցին տեղեկացնում է իր որոշման մասին: Տեղեկացումը կարող է ներկայացվել՝ Ընկերության աշխատակցի կողմից Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին տրամադրված տեղեկացման ձևի վրա «Գործարքը թույլատրել» գրառում կատարելով կամ «Գործարքը թույլատրել» հաղորդագրությունն էլեկտրոնային փոստով Ընկերության աշխատակցին ուղարկելով՝

էեկտրոնային նամակին կցելով Ընկերության աշխատակցի կողմից Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին տրամադրված տեղեկացման ձևը: Այն դեպքերում, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվում, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում և պահպանվում են 5 տարվա ընթացքում:

- (ը) Այն դեպքում, երբ առկա է Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքը, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն Ընկերության աշխատակցին է ներկայացնում վերջինիս կողմից ներկայացված տեղեկացումը «Գործարքը մերժված է» գրառումով:
- (թ) Այն դեպքում, երբ առկա են Օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված Հաճախորդի միջոցների Սառեցման հիմքերը, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն Ընկերության աշխատակցին է ներկայացնում վերջինիս կողմից ներկայացված տեղեկացումը «Միջոցները սառեցնել» գրառումով:
- (ժ) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը Սառեցման մասին որոշումն ընդունելու պահից գործարքը կամ գործարար հարաբերությունը անմիջապես որակում է Կասկածելի և Կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում Լիազոր մարմնին:
- (ժա) Այն դեպքում, երբ Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն Ընկերության աշխատակցին տեղեկացնում է Լիազոր մարմնի կողմից Սառեցումը վերացնելու որոշման մասին, Ընկերության աշխատակիցը կարող է կատարել կասկածելի դիտարկված գործարքը (հաստատել գործարար հարաբերությունը):
- (ժբ) Այն դեպքերում, երբ սույն Կանոնով նախատեսված կարգով Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը կայացնում է գործարքը դադարեցնելու կամ միջոցները Սառեցնելու վերաբերյալ որոշում, նա այդ մասին որոշումը կայացնելու օրը տեղեկացնում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենին:
- (ժգ) Ընկերությունը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում մինչև 5 օրով, իսկ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես տրամադրել հաշվետվություն Լիազոր մարմնին:
- (ժդ) Ընկերության կամ Լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն Լիազոր մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ:
- (ժե) Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել Օրենքի 16-րդ հոդվածի 1-7-րդ մասերով նախատեսված պարտականությունները, կամ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության հաստատման մերժման հանձնարարականի ստացման դեպքերում Ընկերությունը մերժում է գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը և դիտարկում է դրա՝ Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կասկածելի որակելու հարցը:
- (ժզ) Այն դեպքում, երբ Հաճախորդն Ընկերությանն առաջարկում է կնքել (հաստատել) կամ Ընկերության հետ կնքում (հաստատում) է այնպիսի Գործարք (գործարար հարաբերություն), որը թեկուզև համապատասխանում է օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին, սակայն տվյալ Գործարքով (գործարար հարաբերությամբ) հնարավոր չէ պարզել Հաճախորդի ինքնությունը կամ ստանալ տվյալ Գործարքի (գործարար հարաբերության) կնքման կամ հաստատման համար Ընկերության համար Օրենքով նախատեսված տեղեկություններ, Ընկերության համապատասխան աշխատակիցը դադարեցնում կամ մերժում է Գործարքի (գործարար հարաբերության)

կնքումը (հաստատումը)՝ Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցին ներկայացնելով տեղեկացում (էլեկտրոնային կամ թղթային եղանակով), որտեղ նշվում է Գործարքը (Գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու հիմքը, ինչպես նաև կցվում են բոլոր այն փաստաթղթերը, որոնք աշխատակցի կարծիքով անհրաժեշտ կլինեն համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՃԱՆՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանոն 3-1. Հաճախորդի նույնականացումը

- (ա) Ընկերությունը Հաճախորդի (Լիազորված անձի) հետ Գործարար հարաբերության հաստատումը կամ Հաճախորդի հետ Միանգամյա Գործարք կատարելն իրականացնում է Հաճախորդի նույնականացման համար սույն Կանոնակարգով և Օրենքով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց և Հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Ընկերությունն առանց նախապես ինքնության ստուգման Գործարար հարաբերություն չի հաստատում և Միանգամյա Գործարք չի կատարում, հակառակ դեպքում՝ կկիրառվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված զսպող միջոցառումները:
- (բ) Հաճախորդի (Լիազորված անձի) Պատշաճ ուսումնասիրությունը պարտադիր է հետևյալ դեպքերում՝
- 1) Հաճախորդի (Լիազորված անձի) հետ հաստատվում է Գործարար հարաբերություն,
 - 2) կատարվում է Միանգամյա Գործարք, այդ թվում՝ ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի գումարը հավասար է կամ գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը,
 - 3) կասկածներ են առաջանում Հաճախորդի (Լիազորված անձի) նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկությունների (փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,
 - 4) կասկածներ են առաջանում փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:
- (գ) Հաճախորդին (Լիազորված անձին) նույնականացնելիս և ինքնությունը ստուգելիս՝
- 1) ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար անձը հաստատող փաստաթղթի կամ բացառապես լուսանկարով պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունն առնվազն պետք է ներառի՝ անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենսդրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով պահանջվող այլ տեղեկություններ,
 - 2) իրավաբանական անձանց համար պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի (մարմնի անդամի) անունը, ազգանունը և առկայության դեպքում հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենսդրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով պահանջվող տեղեկություններ,
 - 3) պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:
- (դ) Ընկերությունը պետք է հասկանա հաճախորդի գործարար բնույթազիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:

- (ե) Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում պարզելու համար, թե արդյոք Հաճախորդը, նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ փոխկապակցված անձը հանդիսանում է Քաղաքական ազդեցություն ունեցող անձ:
- (զ) Ընկերությունը պարզում է օտարերկրյա իրավաբանական անձ կամ օտարերկրյա ֆիզիկական անձ Հաճախորդի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող Հաճախորդի կենսական շահերի կենտրոնը: Կենսական շահերի կենտրոնը պարզելիս լրացվում է «Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ հայտարարություն» (Ձև3-1(զ)): «Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ հայտարարություն»-ը Գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև, երբ փոխվում է սկզբնական հայտարարությամբ ներկայացված կենսական շահերի կենտրոնը: Սույն կետով նշվածը չի տարածվում «Կենսաթոշակային հովանավոր» սխեմայով կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների հետ Գործարար հարաբերությունների հաստատման դեպքերին, եթե «Կենսաթոշակային հովանավոր» օտարերկրյա իրավաբանական անձ չէ:
- (ե) Օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելիս Ընկերության համար հիմք կարող են ծառայել Օրենքի իմաստով այլ ֆինանսական հաստատության կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները:

Կանոն 3-2. Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը

- (ա) Ընկերությունը գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնում է դրա պատշաճ ուսումնասիրությունը: Ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Հաճախորդի (Լիազորված անձի) հետ գործարքների դիտանցումը՝ Հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այլ տեղեկությունների հետ Հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ Հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով: Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը դիտանցումը կատարում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում:

Կանոն 3-3. Ռիսկերի չափանիշները

- (ա) Հաճախորդին կամ գործարքն (գործարար հարաբերությունն) ուսումնասիրելիս Ընկերությունը դրանք դասակարգում է ըստ Ռիսկի հետևյալ չափանիշների՝
 - (1) Բարձր Ռիսկի չափանիշ,
 - (2) Ցածր Ռիսկի չափանիշ,
 - (3) Միջին (ստանդարտ) Ռիսկի չափանիշ:
- (բ) Հաճախորդի կամ Գործարքի (Գործարար հարաբերության)՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման Ռիսկը գնահատվում է միջին այն դեպքում, երբ բացակայում են Բարձր կամ Ցածր Ռիսկի չափանիշները:
- (գ) Ռիսկը գնահատվում է Բարձր, երբ առկա է Բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ: Բարձր Ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝
 - 1) Քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ հանդիսացող հնարավոր կամ առկա Հաճախորդը կամ Իրական շահառուն,
 - 2) Գործարքում կամ Գործարար հարաբերությունում ներգրավված իրավաբանական անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում են այնպիսի երկրներում (տարածքներում), որտեղ (<< ԿԲ-ի և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ցանկերի համաձայն) չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները,

3) բարդ կամ անսովոր մեծ գումարով Գործարքները, անսովոր պայմաններով Գործարքները կամ Գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն,

4) Գործարքում կամ Գործարար հարաբերությունում այնպիսի իրավաբանական անձի կամ կազմավորման ներգրավվածությունը, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,

5) Գործարքում կամ Գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի անվանատեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր,

6) Գործարքում կամ Գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ,

7) այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնես կամ Գործարար հարաբերություն,

8) առանց առերես շփման Գործարքը կամ Գործարար հարաբերությունը:

(դ) Առանց առերես շփման Գործարար հարաբերություն հաստատելիս Ընկերությունը Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պահանջում է, որ առաջին վճարումը կատարվի այնպիսի ֆինանսական հաստատությունում Հաճախորդի անվամբ բացված հաշվով, որը՝

1) իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները,

2) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և Լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված՝ Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,

3) չի գտնվում կամ բնակվում այնպիսի երկրում կամ տարածքում, որտեղ (Լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան) չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները, կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից չէ:

Առանց առերես շփման Գործարար հարաբերություն հաստատելիս Ընկերությունը Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության շրջանակներում նաև իրականացնում է որոնողական ուսումնասիրություններ համացանցում՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ այլ լեզուներով (Google, Facebook, Twitter, LinkedIn և այլն):

(ե) Ռիսկը գնահատվում է ցածր այն դեպքում, երբ

1) առկա են միայն Ցածր Ռիսկի չափանիշներ,

2) առկա է միջին Ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված Ցածր Ռիսկի Գործարք,

3) առկա է Բարձր Ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված Ցածր Ռիսկի Գործարք, որի գումարը չի գերազանցում այդ նորմատիվ իրավական ակտերով սահմանված շեմը (այդպիսի շեմ նախատեսված լինելու դեպքում):

(զ) Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան է նախատեսված սույն Կանոնակարգով, տարբեր Ռիսկերի չափանիշների միաժամանակ առկայության դեպքում, Ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան:

(է) Հաճախորդի հետ Գործարար հարաբերության ընթացքում Ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում Ընկերության Ներքին դիտարկումների աշխատակիցը վերանայում է տվյալ Ռիսկի գնահատումը և Ռիսկի փոփոխության դեպքում իրականացնում է նոր որոշված Ռիսկի համար Օրենքով և սույն Կանոնակարգով նախատեսված Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:

(ը) Ցածր Ռիսկի չափանիշներ են՝

(1) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,

(2) պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ այն մարմինների, որոնք գտնվում են այնպիսի երկրներում (տարածքներում), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները,

(3) պետական ոչ առևտրային կազմակերպությունները և պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ այնպիսի կազմակերպությունների և հիմնարկների, որոնք գտնվում են այնպիսի երկրներում (տարածքներում), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները:

- (թ) Ընկերության աշխատակիցն Ընկերության Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ ստանալու օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրը վերջինիս դասակարգում է ըստ Ռիսկի Բարձր կամ Ցածր չափանիշների: Այն դեպքում, երբ Ընկերության աշխատակցի կարծիքով Հաճախորդը պետք է որակվի որպես Բարձր Ռիսկի չափանիշների Հաճախորդ, նա այդ մասին անմիջապես տեղեկացնում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին, իսկ Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցից պահանջ ստանալու դեպքում՝ նրան է տրամադրում այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել Հաճախորդին Բարձր Ռիսկի չափանիշների Հաճախորդ դիտարկելու համար:
- (ժ) Ընկերության աշխատակիցն Ընկերության Հաճախորդի համար իրականացվելիք Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկություններ (հայտ կամ հանձնարարական) ստանալու պահից մինչև հայտով կամ հանձնարարականով նախատեսված Գործարքի կատարումը, այն դասակարգում է ըստ Ռիսկի՝ Բարձր կամ Ցածր չափանիշների: Այն դեպքում, երբ Ընկերության աշխատակցի կարծիքով այդ Գործարքը (Գործարար հարաբերությունը) պետք է որակվի որպես Բարձր Ռիսկի չափանիշների Գործարք, նա այդ մասին անմիջապես տեղեկացնում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին, իսկ Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցից պահանջ ստանալու դեպքում՝ նրան է տրամադրում այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել Հաճախորդին Բարձր Ռիսկի չափանիշների Գործարք (Գործարար հարաբերություն) դիտարկելու համար:
- (ժա) Ընկերությունը տարին մեկ անգամ վերանայում է իր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը:

Կանոն 3-4. Հաճախորդի պատշաճ և հավելյալ ուսումնասիրությունը

- (ա) Սույն Կանոնակարգի Կանոն 3-1 (բ) կետով նախատեսված դեպքերում Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրություն՝ ձեռնարկելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման Ռիսկին համապատասխան միջոցառումներ: Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության ընթացքում Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է առկա կամ հնարավոր Հաճախորդի և վերջինիս հետ Գործարքի դիտանցում, որպեսզի հավաստիանա Հաճախորդի, նրա Գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկատվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ եկամուտների աղբյուրի իսկության հարցում:
- (բ) Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է Հաճախորդին (Լիազորված անձին կամ Իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը և Գործարար հարաբերության ողջ ընթացքում ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:
- (գ) Միջին Ռիսկի դեպքում Ընկերության Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրություն և ձեռնարկում Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ:

- (դ) Միջին Ռիսկի դեպքում Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Հաճախորդի հետ Գործարքների դիտանցման նպատակով ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.
- 1) ստուգում է Գործարքի կամ Գործարար հարաբերության առնչությամբ Հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և Օրենքի իմաստով այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
 - 2) առնվազն տարին մեկ անգամ համադրում է Հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր Գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
 - 3) առնվազն տարին մեկ անգամ պարզում է Հաճախորդի, Գործարքների և Գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը.
 - 4) ստուգում է Գործարքի կամ Գործարար հարաբերության համադրելիությունը Հաճախորդի Գործարար բնութագրին:
- (ե) Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն առնվազն պահանջում է Ընկերության՝ Կամավոր Կուտակային Կենսաթոշակային և Ներդրումային Ֆոնդերի փայերի Պահառության և Ռեեստրավարման Կանոններով նախատեսված փաստաթղթերը:
- (զ) Ընկերության Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է Հաճախորդի Հավելյալ ուսումնասիրություն այն դեպքերում, երբ Հաճախորդը և (կամ) նրա կողմից իրականացված Գործարքը դասակարգվել են Բարձր Ռիսկի չափանիշների կամ Ընկերությունը Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համաձայն ստացել է Լիազոր Մարմնի հանձնարարականը՝ Հաճախորդի Հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու մասին: Հավելյալ ուսումնասիրության իրականացման դեպքում ի լրումն Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը նաև.
- 1) ստանում է Ընկերության Ավագ Ղեկավարության հավանությունը Հաճախորդի հետ Գործարար հարաբերություն հաստատելուց առաջ Գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ Հաճախորդը կամ Իրական Շահառուն բնութագրվում է Բարձր Ռիսկի չափանիշով, կամ Գործարքը կամ Գործարար հարաբերությունը ներառում է այդպիսի չափանիշ,
 - 2) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,
 - 3) մանրամասն ուսումնասիրում է Գործարքի կամ Գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,
 - 4) Քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնում է ընթացիկ հավելյալ դիտարկում՝ այդ նպատակով հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ այլ լեզուների տառադարձով համացանցում (Google, Facebook, Twitter, LinkedIn և այլն) անհրաժեշտ որոնողական ուսումնասիրություններ իրականացնելու միջոցով:
- (է) Բարձր Ռիսկի դեպքում Կանոնակարգի Կանոն 3-2-ով նախատեսված ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Հաճախորդի հետ Գործարքների դիտանցման նպատակով Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.
- 1) Գործարքի կամ Գործարար հարաբերության առնչությամբ Հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

- 2) առնվազն 6 ամիսը մեկ անգամ Հաճախորդի՝ տարբեր Գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորինս երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
 - 3) առնվազն 6 ամիսը մեկ անգամ (Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում՝ 3 ամիսը մեկ անգամ) Հաճախորդի, Գործարքների և Գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,
 - 4) Հաճախորդի Գործարար բնութագրին որևէ Գործարքի կամ Գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ և փաստաթղթեր:
- (ը) Այն դեպքում, երբ Հաճախորդը դասակարգվել է որպես Ցածր Ռիսկի չափանիշի Հաճախորդ, Ընկերության Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է Հաճախորդի Պարզեցված ուսումնասիրություն: Հաճախորդի Պարզեցված ուսումնասիրությունը ներառում է Հաճախորդի վերաբերյալ հետևյալ տեղեկությունների հավաքագրումն ու ուսումնասիրությունը.
- 1) Ֆիզիկական անձ Հաճախորդի դեպքում՝
 - (Ա) անունը, ազգանունը,
 - (Բ) անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
 - (Գ) Լիազորված անձի վերաբերյալ (Ա), (Բ) կետերով նախատեսված տեղեկությունները (առկայության դեպքում):
 - 2) իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում՝
 - (Ա) անվանումը,
 - (Բ) պետական գրանցման համարը,
 - (Գ) բանկային հաշիվները տնօրինելու իրավասություն ունեցող և/կամ լիազոր անձին նույնականացնող տեղեկությունները:
- (թ) Այն դեպքում, երբ Հաճախորդի հետ Գործարար հարաբերություններ հաստատելիս վերջինս դասակարգվում է որպես Ցածր ռիսկային խմբի չափանիշների Հաճախորդ, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության նվազեցված միջոցառումներ:
- (ժ) Ցածր Ռիսկի դեպքում ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.
- 1) ստուգում է Գործարքի կամ Գործարար հարաբերության առնչությամբ Հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով Հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,
 - 2) համադրում է Հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր Գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են Հաճախորդի Գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
 - 3) պարզում է Հաճախորդների, Գործարքների և Գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել Միջին կամ Բարձր ռիսկի Հաճախորդների, Գործարքների կամ Գործարար հարաբերությունների հետ կապեր:
- (ժա) Ընկերությունը կարող է չիրականացնել Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրություն, բացառությամբ նույնականացման և ինքնության ստուգման, եթե առկա են կասկածներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ, և Ընկերությունը ողջամտորեն կարծում է, որ Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը կհանգեցնի Հաճախորդին իր կասկածների բացահայտմանը: Այս դեպքում Ընկերությունը Կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում Լիազոր Մարմնին:

Կանոն 3-5. Իրական շահառուի բացահայտումը

- (ա) Ընկերությունը մինչև Գործարար հարաբերության հաստատումը կամ Միանգամյա Գործարքի կնքումը պարզում է Իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում նույնականացնում է Իրական շահառուին և ողջամիտ քայլեր է ձեռնարկում նրա ինքնությունը ստուգելու համար: Իրավաբանական անձ Հաճախորդների դեպքում Ընկերությունը լիարժեք տեղեկատվություն է ձեռք բերում իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ: Իրական շահառուի առկայությունը պարզելիս լրացվում է «Իրական շահառուի առկայության վերաբերյալ հայտարարություն» (Ձև3-5(ա)): «Իրական շահառուի առկայության վերաբերյալ հայտարարություն»-ը Գործարար հարաբերության ընթացքում փոխվում է Իրական շահառուի փոխվելու դեպքում: Ընկերության ձեռնարկած քայլերը, եզրահանգումները և դրանց հիմնավորումները փաստաթղթավորվում և պահվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
- (բ) Այն դեպքում, երբ Հաճախորդը դասակարգվել է որպես Ցածր ռիսկային չափանիշների Հաճախորդ, Իրական շահառուի նույնականացման և ինքնության ստուգման նկատմամբ կիրառվում են սույն Կանոնակարգով Ցածր ռիսկային չափանիշների Հաճախորդների համար նախատեսված պահանջները:

Կանոն 3-6. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար պահանջվող փաստաթղթերը և դրանց պահպանումը

- (ա) Ընկերությունը Հաճախորդի (Լիազորված անձի) հետ Գործարար հարաբերություն հաստատելիս նրանից պահանջում է սույն Կանոնակարգով սահմանված, նրան նույնականացնելու և պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- (բ) Կանոնակարգով նախատեսված տեղեկատվությունը պետք է հաշվառվի: Հաշվառումն իրականացվում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից՝ 4-2 (ե) Ենթականոնով նախատեսված հաշվետվության մեջ ներառելով այն փաստաթղթերը, որոնք Ընկերությունը ստացել է Հաճախորդից (Լիազորված անձից) նրա հետ Գործարար հարաբերություն հաստատելու կամ նրա համար Գործարք կատարելու ժամանակ:
- (գ) 4-2(ե) Ենթականոնից բացառություն են կազմում այն տեղեկություններն ու փաստաթղթերը, որոնք Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը ստացել է բացառապես Հաճախորդին նույնականացնելու կամ նրա Պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելու համար:
- (դ) Ընկերությունը Կանոնակարգով նախատեսված տեղեկատվությունը թարմացնում է տարին մեկ անգամ:
- (ե) Ընկերությունը հաշվառում և առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերի և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությամբ ավելի երկար ժամկետ նախատեսված լինելու դեպքում՝ այդ ժամանակահատվածի ընթացքում պահպանում է՝
 - 1) Հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և գործարար թղթակցության տվյալները,
 - 2) ներպետական և միջազգային Գործարքների կամ Գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր տվյալները, որոնք բավարար կլինեն տվյալ Գործարքի կամ Գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար, ներառյալ՝ Հաճախորդի և Գործարքի մյուս կողմի անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության (գտնվելու) վայրը, Գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը,
 - 3) Կասկածելի Գործարքների կամ Գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված Գործարքների կամ Գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տվյալները,

- 4) Օրենքով նախատեսված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա Ռիսկերի գնահատման արդյունքները:
- (գ) 3-6 (ե) ենթակառուցի (1)-ից (4) կետերով նախատեսված տեղեկություններն են՝
- (1) Հաճախորդի հետ կնքված պայմանագիրը,
 - (2) Հաճախորդի կողմից տրված տեղեկատվությունը (փաստաթղթերը),
 - (3) Հաճախորդի՝ Ընկերության «Կամավոր Կուտակային Կենսաթոշակային և Ներդրումային Ֆոնդերի Փայերի Պահառության և Ռեեստրավարման Կանոններ»-ով սահմանված հայտերը (ծևերը),
 - (4) Հաճախորդի և Ընկերության միջև էլեկտրոնային հաղորդակցությունը (առկայության դեպքում),
 - (5) Հաճախորդի վերաբերյալ Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից հավաքագրված և նախորդ կետերով չնախատեսված տեղեկատվությունը:

Կանոն 3-7. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկատվության (փաստաթղթերի) շրջանառությունը ֆինանսական խմբի անդամների միջև

- (ա) Ֆինանսական խմբի անդամները Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված (ներառյալ՝ Լիազոր մարմնի կողմից ստացված) և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը (բոլոր փաստաթղթերը), անհրաժեշտության դեպքում, հնարավորինս սեղմ ժամկետում հասանելի են դարձնում ֆինանսական խմբի մյուս բոլոր անդամներին:

ԳԼՈՒԽ 4. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Կանոն 4-1. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը

- (ա) Ընկերությունում փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելման գործառույթները դրվում են Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի վրա:
- (բ) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իր գործառույթներն իրականացնում է միանձնյա կարգով: Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն անհրաժեշտության դեպքում օժանդակում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:
- (գ) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը Կանոնակարգով, Օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի Ընկերության Ավագ Ղեկավարության կարգավիճակ:
- (դ) Ընկերության աշխատակիցները պարտավոր են Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի պահանջով նրան ներկայացնել ցանկացած տեղեկատվություն, որը վերջինիս կարծիքով անհրաժեշտ կլինի Կանոնակարգով նախատեսված գործառույթներն իրականացնելու և փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու համար:

Կանոն 4-2. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի գործառույթները

- (ա) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի գործառույթներն են՝
- 1) մշակում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտեր, դրանք ներկայացնում է համապատասխան մարմնի հաստատմանը,
 - 2) իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտերի արդյունավետության դիտանցումը, առաջարկներ է ներկայացնում դրանց արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,
 - 3) ապահովում է Ընկերության կապը Լիազորված մարմնի հետ,
 - 4) ապահովում է Ընկերության անունից Լիազոր մարմնին տեղեկացման ենթակա Գործարքների վերաբերյալ հաշվետվությունների և այլ տեղեկությունների տրամադրումը,

- 5) Կասկածելի Գործարար հարաբերությունների կամ Գործարքների բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ և ուսումնասիրություններ,
- 6) պահպանում է Կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացված վերլուծությունների արդյունքները,
- 7) հետևում է Գործարար հարաբերությունների ընթացիկ դիտանցմանը և պարբերաբար վերանայում է տեղեկությունների ճշգրտման և թարմացման ընթացքը,
- 8) ապահովում է Ընկերության Հաճախորդների և Գործարքների (Գործարար հարաբերությունների) դասակարգումն ըստ Ռիսկի աստիճանի, իրականացնում է Բարձր Ռիսկի չափանիշների Հաճախորդների հետ Գործարար հարաբերությունների ընթացիկ դիտանցումը,
- 9) կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում ներքին ուսուցումը և վերապատրաստումը, իրականացնում է ուսուցման ծրագրերի ընթացքի և արդյունքների դիտանցումը,
- 10) որոշում է կայացնում Գործարար հարաբերության կամ Գործարքի իրականացումը մերժելու վերաբերյալ, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված ֆինանսական միջոցները ստեղծելու վերաբերյալ, այդ հարցն ըստ անհրաժեշտության քննարկում է ներքին ազդակ տրամադրած և Հաճախորդներին սպասարկող այլ աշխատակիցների հետ, իսկ տարածայնությունների դեպքում կայացնում է վերջնական որոշում,
- 11) Ընկերության կառավարման համապատասխան մարմնի կողմից սահմանված չափանիշների հիման վրա սահմանված կարգով նրան տեղեկացնում է Գործարար հարաբերության հաստատումը կամ Գործարքի իրականացումը մերժելու մասին,
- 12) իրականացնում է տեղեկատվության հաշվառումը և տեղեկատվության պահպանման դիտանցումը:
 - (բ) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը 6 ամիսը մեկ անգամ ուսումնասիրում է Ընկերության կողմից իրականացված Գործարքների (Գործարար հարաբերությունների), Ընկերության աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Օրենքին, Կանոնակարգին և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին այլ իրավական ակտերի պահանջներին (Ներքին ուսումնասիրություն):
 - (գ) Ներքին ուսումնասիրությունն իրականացվում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի որոշման հիման վրա: Ներքին ուսումնասիրության վերաբերյալ գրավոր որոշումը (Ուսումնասիրության որոշում) հանձնվում է Ընկերության աշխատակիցներին և Ընկերության գլխավոր գործադիր տնօրենին:
 - (դ) Ուսումնասիրության որոշման մեջ նշվում են ուսումնասիրության նպատակները, ժամկետները և Ընկերության աշխատակիցների կողմից Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին տրամադրվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը և դրանց տրամադրման ժամկետները:
 - (ե) Ուսումնասիրության արդյունքները ամփոփվում են Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի հաշվետվության մեջ, որը ներկայացվում է Ընկերության տնօրենների խորհրդին՝ ուսումնասիրության որոշման մեջ նշված ուսումնասիրության ժամկետի ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
 - (զ) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից ներկայացվող հաշվետվության մեջ ներառվում է.
 - 1) Պարտադիր տեղեկացման ենթակա Գործարքների թիվը, Կասկածելի Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,
 - 2) այն Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,
 - 3) Ընկերության մերժած կամ դադարեցրած Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,
 - 4) ստեղծված գույքի չափը,

- 5) Ընկերության աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, սույն Կանոնակարգի և Լիազոր մարմնի ընդունած այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը:
- (ե) Գործող օրենսդրության ուսումնասիրության և կատարված վերլուծությունների արդյունքում Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը, անհրաժեշտության դեպքում, ներկայացվող հաշվետվությանը կից ներկայացնում է նաև իր կողմից մշակված, Ընկերության Կանոնակարգի փոփոխությունների և լրացումների նախագիծը: Նշված նախագծի քննարկումից հետո այն ներկայացվում է համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

ԳԼՈՒԽ 5. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ

Կանոն 5-1. Աուդիտի իրականացումը

- (ա) Ընկերության ներքին աուդիտորը տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ գործադիր մարմինը և Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն ապահովում են Ընկերության լիարժեք համապատասխանությունն Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և Կանոնակարգով սահմանված պահանջներին:
- (բ) Ներքին աուդիտորն Ընկերության բաժնետերերին, տնօրենների խորհրդին և գործադիր մարմնին պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Կանոն 6-1. Ուսուցման կազմակերպումը

- (ա) Ընկերությունը կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերական ուսուցումներ գլխավոր գործադիր տնօրենի, Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի, Ընկերության աշխատակիցների և ներքին աուդիտի գործառույթներ իրականացնող անձի համար:
- (բ) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի դասընթացներն անցկացվում են Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից առնվազն տարին երկու անգամ՝ Կանոնակարգի 4-2 (ե) ենթակետով նախատեսված հաշվետվության ներկայացման պահից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում: Դասընթացների անցկացման ժամանակացույցը հաստատվում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով Ընկերության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և աշխատանքային գրաֆիկը:
- (գ) Դասընթացների անցկացման ժամանակացույցը ներառվում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից ներկայացվող հաշվետվության մեջ:
- (դ) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի դասընթացներն արձանագրվում են:
- (ե) Իրականացված ուսուցման նյութերը, դրան մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառվում են և պահպանվում առնվազն 5 տարի ժամկետով:
- (զ) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում իրավասու նոր աշխատակիցների համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով ուսուցումը կազմակերպվում է աշխատանքի ընդունվելուց հետո երեք ամսվա ընթացքում:

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման
դեմ պայքարի մասին» կանոնակարգ
Ձև 2-2 (գ)**

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

N	Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), անհատականացնող տվյալները	Գործարքի էությունը	Գործարքը կասկածելի համարելու հիմքերը	Ընկերության աշխատակցի անունը, ազգանունը	Գործարքի կատարման համար նախատեսված ժամկետները	Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

Տեղեկացում տրամադրելու օրը, ժամը	
---	--

Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի որոշումը	
Որոշման կայացման օրը, ժամը	

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման
դեմ պայքարի մասին» կանոնակարգ
Ձև 3-1(զ)**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ**

Ես՝ _____,
*ֆիզիկական անձ հաճախորդի/իրավաբանական անձ հաճախորդի/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող
հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը*

հայտարարում եմ, որ _____
իմ կամ իրավաբանական անձ հաճախորդի/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդի անվանումը

կենսական շահերի կենտրոնն է հանդիսանում _____,
քանի որ.

Ֆիզիկական անձանց համար

- բնակվում եմ այնտեղ,
- ընտանիքս բնակվում է այնտեղ,
- բնակելի տունս գտնվում է այնտեղ,
- անձնական հիմնական գույքս գտնվում է այնտեղ,
- ընտանեկան հիմնական գույքս գտնվում է այնտեղ,
- հանդիսանում է իմ տնտեսական գործունեության հիմնական վայրը,
- հանդիսանում է իմ մասնագիտական գործունեության հիմնական վայրը,
- այլ _____ :

Իրավաբանական անձանց/ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդների համար

- ընկերությունը գրանցված է այնտեղ,
- ընկերությունը հողիինգային խմբի անդամ է, որի մայր ընկերությունը գրանցված է այնտեղ,
- ընկերությունը հարկային ռեզիդենտ է այնտեղ,
- այլ _____ :

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում կենսական շահերի կենտրոնի փոփոխության դեպքում տեղյակ պահել Ձեզ:

Ստորագրություն
Օր/ամիս/տարեթիվ

Սույն հայտարարությունը լրացվում է միայն օտարերկրյա ֆիզիկական անձ, օտարերկրյա իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդների կողմից:

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման
դեմ պայքարի մասին» կանոնակարգ
Ձև 3-5(ա)**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Իրական շահառուի առկայության վերաբերյալ**

Ես՝ _____, հայտարարում եմ, որ՝

- գործարար հարաբերության մեջ կամ գործարքում հանդիսանում եմ իրական շահառու.
- գործարար հարաբերության մեջ կամ գործարքում առկա է (են) այլ իրական շահառու (ներ):

Իրական շահառուի (ների) վերաբերյալ հայտնում եմ հետևյալ տվյալները՝

Ազգանուն, անուն	
Անձը հաստատող փաստաթղթի տեսակ, սերիա և համար	
Ծննդյան ամսաթիվ	
Ծննդավայր	
Ազգություն	
Հաշվառման հասցե	
Բնակության հասցե	
Կենսական շահերի կենտրոնը (օտարերկրյա անձանց համար)	
Իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) քանակը	
Իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) բաժնեչափը, %	
Իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) տիրապետման եղանակը (ուղղակի, անուղղակի)	
Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը, %	
Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության եղանակը (ուղղակի, անուղղակի)	
Իրավաբանական անձի կառավարման մարմիններում ներգրավվածությունը	
Իրավաբանական անձի հետ ունեցած այլ ընդհանուր տնտեսական շահի բնույթը և նկարագրությունը	

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության դեպքում տեղյակ պահել Ընկերությանը:

Ստորագրություն
Օր/ամիս/տարեթիվ